զոտությունների վերաբերյալ, ինչպես նաև խոսեց ռեսպուբլիկայում ստեղծվելիք հեռագրական խոշոր կոմպլեքսների մասին, որոնք կուսումնասիրեն քիմիայի այս կամ այն բնագավառը՝ սերտորեն կապակցված մյուս գիտությունների հետ։

Մտքերի փոխանակության ժամանակ ելույթներով հանդես եկան ակադեմիկոսներ Ա. Կարինյանը, Գ. Բարաջանյանը, Ի. Նզիազարովը, Մ. Ներսիսյանը, Վ. Գուլքանյանը, Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետի գիտահետազոտական աշխատանքների կոորդինացման կոմիտեի նախագահ Բ. Մարկիսովը։

Գիտնականների ընդհանուր ժողովում ճառով հանդես եկավ Հայաստանի կոմպարտիայի Կենտկոմի առաջին քարտուղար Յա. Զարոբյանը*։

Ընդհանուր ժողովը հաստատեց գիտությունների ակադեմիայի նախագահության հաշվետվությունը և նրան հանձնարարեց մշակել գիտությունների ակադեմիայի գործունեության բարելավման կոնկրետ միջոցառումներ։

Տեղի ունեցած ընտրություններում ՀՍՍՌ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ ընտրվեց ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը։

Ընդհանուր ժողովի աշխատանքներին մասնակցում էին ռեսպուբլիկայի Գերագույն սովետի նախագահության նախագահ Ն. Հարությունյանը, ՀԿՊ Կենտկոմի երկրորդ քարտուղար Հովհ. Բաղդասարյանը, ռեսպուբլիկայի Մինիստրների սովետի նախագահի տեղակալ Լ. Մտեփանյանը։

## ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ԺՈՂՈՎԸ

Մարտի 6-ին ԳԱ Նիստերի փոքր դահլիճում տեղի ունեցավ հասարակական գիտությունների բաժանմունքի տարեկան հաշվետու ժողովը։ Բաժանմունքի հիմնարկների 1963 թ. գիտական գործունեության արդյունքների մասին զեկուցումով հանդես եկավ բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանը։

— Հաշվետու ժամանակաշրջանում,— ասաց զեկուցողը,— բաժանմունքի գիտական հիմնարկների հետազոտական աշխատանքի կազմակերպումը կատարվել է գաղափարական հարցերի վերաբերյալ ՍՄԿՊ XXII համագումարի և ՍՄԿՊ Կենտկոմի հունիսյան պլենումի որոշումների լույսի տակ։ Բաժանմունքի բյուրոն վերանայել է գիտական հիմնարկների թեմատիկ պլանները, գիտական կոլեկտիվների ուշադրությունը կենտրոնացնելով արդիական պրոբլեմների ուսումնասիրման վրա։ 1964—1965 թթ. թեմատիկ պլաններից հանվել են նեղ, երկրորդական նշանակություն ունեցող հարցերը, թողնելով հանգուցային և ակտուալ պրոբլեմներ։ Մշակվել է նաև 1966—1970 թթ. հիմնական պրոբլեմները։ Թեմատիկ պլանների վերանայումը և ճշտումը նպատակ է ունեցել նաև վերացնելու բազմաթեմայնությունը և մի շարք թեմաների ուսումնասիրումը կատարել կոլեկտիվ ուժերով։

Որպես դրական երևույթ պետք է համարել այն, որ հաշվետու տարում ավարտվել են կոլեկտիվ այնպիսի աշխատանքներ, ինչպիսիք են՝ հայ ժողովրդի պատմության քառահատորյակի առաջին հատորը, սովետահայ գրականության պատմության երկրորդ հատորը, հայ նոր շրջանի գրականության երրորդ հատորը. հայոց լեզվի բացատրական բառարանի առաջին հատորը և այլն։

Զգալի աշխատանք է կատարված կլասիկների աշխատությունների հրապարակման ուղղությամբ։

Անցյալ տարի հրատարակվել է մոտ 60 անուն գիրք, այդ թվում ակադեմիկոս Ս. Երեմյանի, պրոֆեսորներ Գ. Ջահուկյանի, Կ. Ղաֆադարյանի, գիտությունների թեկնածուներ Ս. Բարխուդարյանի, Ս. Աղաբաբյանի, Թելունցի և մյուսների ուսումնասիրությունները։

Հնագիտության և ազգագրության ինստիտուտը հաջողությամբ շարունակել է պեղումները Կարմիր բլուրում (ԳԱ թղթակից անդամ Պյատրովսկու ղեկավարությամբ), Դվինի պեղումները (պրոֆեսոր Կ. Ղաֆադարյանի ղեկավարությամբ), Արմավիրի և Գառնիի պեղումները (պրոֆեսոր Բ. Առաքելյանի ղեկավարությամբ)։

Այնուհետև ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանը նշում է, որ մեր գիտնականներն ավելի են ամ-

---

* Ընկ. Յա. Ն. Զարոբյանի ճառը տե՛ս «Տեղեկագրի» այս համարում։

բակնդել կապերը Վրաստանի, Ադրբեջանի, Մոսկվայի, Լենինգրադի, Կիևի, Լվովի պատմաբան-ների հետ և կատարում են միասնական աշխատանքներ։

Հայաստանի և եղբայրակից հանրապետությունների ժողովուրդների բարեկամության է՛լ ավելի ամրապնդման նպատակով պատմության ինստիտուտի նախաձեռնությամբ հաշվետու տարում հրավիրվել է ՍՍՌՄ ժողովուրդների բարեկամությանը նվիրված Անդրկովկասի պատմաբանների գիտական նստաշրջանը, որին մասնակցել են Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի գիտությունների ակադեմիաների պատմության ինստիտուտները, ՍՄԿՊ Կենտկոմին առընթեր Մարքսիզմ-Լենինիզմի ինստիտուտի Անդրկովկասյան հանրապետությունների ֆիլիալները։ Հաջողությամբ անցկացվեց Սայաթ-Նովայի 250-ամյակին նվիրված հոբելյանական գիտական նստաշրջանը։

Ակադեմիկոս Ներսիսյանը իր զեկուցման մեջ կանգ առավ նաև բաժանմունքի բյուրոյի գործունեության, առաջիկայում կատարվելիք մի շարք խնդիրների վրա։ Նա գիտական հիմնարկների ուշադրությունը կենտրոնացրեց խոշոր թեմաների կոլեկտիվ ուսումնասիրման վրա, դրեց փիլիսոփայության ու իրավունքի և արևելագիտության սեկտորները վերակառուցելու և գիտահետազոտական ինստիտուտներ դարձնելու խնդիրը։

— Սակայն ձեռք բերած հաջողությունների կողքին,— ասաց զեկուցողը,— կան նաև թերություններ, որոնց վերացման համար անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել։ Նախ և առաջ լուրջ թերություն պետք է համարել այն, որ գիտական պատշաճ բարձրության վրա չեն գտնվում հրատարակված գրքերի ու մենագրությունների մի մասը։ Հաճախ որոշ գիտնականներ տուրք են տալիս «շատագրության» արատավոր երևույթին, արհեստականորեն ուռճացնելով այս կամ այն թեմային նվիրված մենագրությունը։ Դա մեծ մասամբ գալիս է նրանից, որ երբեմն գիտական խորհուրդները և սեկտորները լուրջ գիտական մոտեցում չեն ունենում հրատարակվող գրքերի քննարկմանը։ Անհրաժեշտ է բարձրացնել գիտական խորհուրդների, սեկտորների պատասխանատվությունը հրատարակվող գրքերի, մենագրությունների, ինչպես նաև դիսերտացիաների թեմաների գնահատման նկատմամբ, հասնել այն բանին, որ գիտական աշխատանքը լինի բարձր որակի։ Այնուհետև, ընկ. Ներսիսյանը մանրամասն կանգ առավ գիտահետազոտական ինստիտուտների առանձին սեկտորների աշխատանքում գոյություն ունեցող թերությունների բացահայտման վրա։ Նա մասնավորապես նշեց, որ լեզվի ինստիտուտի ընդհանուր լեզվաբանության սեկտորը և գրականության ինստիտուտի մամուլի սեկտորը չունեն իրենց թեմատիկան ու պրոբլեմը։ Պատմության ինստիտուտում լուրջ կերպով չեն զբաղվում պատմագրության հարցերով, թերևս հարկ լինի առանձնացնել մի խումբ գիտնականների պատմագրության ուսումնասիրությամբ զբաղվելու համար։

Խոսելով արևելագիտության, փիլիսոփայության և իրավունքի սեկտորների աշխատանքներում գոյություն ունեցող թերությունների մասին, զեկուցողը նշեց, որ այդ սեկտորները պետք է լուրջ կերպով զբաղվեն Մերձավոր Արևելքի ժամանակակից ռեակցիոն գաղափարախոսության քննադատության հարցերով։

Ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանը ավարտելով իր հաշվետու զեկուցումը, բաժանմունքի բյուրոյի և գիտահետազոտական ինստիտուտների առջև խնդիր դրեց ձեռնարկել բոլոր միջոցները գիտահետազոտական աշխատանքներում գոյություն ունեցող թերությունները վերացնելու համար։ Նա գիտնականների առաջնահերթ խնդիրը համարեց վերացնել բազմաթեմայնությունը, մանր, գիտական քիչ արժեք ներկայացնող թեմաների փոխարեն ուսումնասիրել խոշոր և պրոբլեմային հարցեր, ստեղծել բարձրարժեք գիտական ուսումնասիրություններ։

Զեկուցման շուրջը բացվեց մտքերի փոխանակություն։

Տնտեսագիտության ինստիտուտի դիրեկտորի տեղակալ, տնտեսագիտական գիտությունների դոկտոր Մ. Ադոնցը իր ելույթում նշեց, որ անցած մեկ տարվա ընթացքում ինստիտուտի գիտնականների ջանքերով ուսումնասիրվել են 15 թեմաներ, որոնք վերաբերում են ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության զարգացման հեռանկարներին, սոցիալիզմի քաղաքատնտեսությանը, ռեսպուբլիկայի ազատ աշխատանքային ռեսուրսների ուսումնասիրմանը, արտադրողական ուժերի տեղաբաշխման պրոբլեմին, բնակչության եկամուտների և սպառման բալանսին և այլ հարցերին։ Սակայն, նշեց նա, տնտեսագետները թույլ են զբաղվում ժողովրդական տնտեսության պատմության հարցերով, չի կոորդինացվում ռեսպուբլիկայի բուհերի տնտեսագիտական ամբիոնների և ինստիտուտի աշխատանքը։

— Մեր հիմնական խնդիրներից մեկը,— իր ելույթում ասաց պատմության ինստիտուտի դիրեկտոր, պատմական գիտությունների դոկտոր Գ. Գալոյանը,— հայ ժողովրդի պատմության

քառահատոր ձեռնարկի ստեղծումն է, որի համար կատարված է մեծ աշխատանք։ Սակայն հասարակական գիտությունների բաժանմունքի մյուս ինստիտուտները վատ են օգնում այդ կարևոր գործին, անհրաժեշտ է կոորդինացնել բոլոր ինստիտուտների գիտնականների ուժերը այդ ձեռնարկի ստեղծման համար։

Հաջորդ պրոբլեմը, ասաց նա, Սովետական Հայաստանի բանվոր դասակարգի և գյուղացիության պատմության հարցերի ուսումնասիրությունն է։ Մեր գիտնականները ոչ միայն պետք է ամփոփեն արխիվային նյութերը, այլև ուսումնասիրեն ռեալ իրականությունը՝ գործարանը, կոլտնտեսությունը և տան մեր էպոխայի արդի պատմությունը։

Ընկ. Գալոյանը հատկապես շեշտեց սփյուռքահայության պատմության ուսումնասիրության անհրաժեշտությունը։ Անհատի պաշտամունքի ժամանակ մեծագույն մեղք էր համարվում սփյուռքահայության պատմությամբ զբաղվելը, որն իր բացասական կնիքն էր դրել մայր հայրենիքի հետ սփյուռքահայության կապերի ստեղծման վրա։ Ահա թե ինչու անհրաժեշտ է վերացնել այդ բացը և լիարժեք կերպով զբաղվել հայ ժողովրդի այդ մասի պատմության հարցերով։

Հնագիտության և ազգագրության ինստիտուտի դիրեկտոր Բ. Առաքելյանը գիտնականների ուշադրությունը հրավիրեց գիտական քննադատության ուժեղացման վրա։ Մենք լուրջ գիտական քննադատություն չունենք, ասաց նա, հաճախ որոշ գիտնականներ չեն ուզում վատություն անել, ընկերոջ խաթրին դիպչել, տեղի, անտեղի գովաբանում են այս կամ այն աշխատությունը, փոխանակ քննադատելու թույլ տրված սխալներն ու թերությունները։

Ակադեմիկոս Ա. Բ. Կարինյանը իր ելույթում նշեց, որ մամուլի պատմության սեկտորի առթիվ սկսված վեճերը ունեն կարևոր նշանակություն։ Նախապես այն կարծիքը կար, ասաց նա, որ այդ սեկտորը պետք է նոր թափ հաղորդի ամբողջ հայ մամուլի և ապա առանձին պարբերագիրների ոչ միայն գրական-գեղարվեստական, այլև բոլոր կարևոր հարցերի ուսումնասիրությանը։ Հայտնի է, որ ինչպես հանրահայտ «Սովրեմեննիկում» ,«Օտեչեստվեննայա Զապիսկայում», այնպես էլ «Հյուսիսափայլում», «Մուրճում» և այլ պարբերականներում զետեղված նյութերը վերաբերում էին գրականության, տնտեսագիտության, փիլիսոփայության, հրապարակախոսության և գիտության այլ պրոբլեմներին։ Սակայն գրականության ինստիտուտի դիրեկցիայի թելադրանքով այդ սեկտորը գրեթե բացառապես զբաղվում է գրականության պատմությանը նպաստող ձեռնարկները պատրաստելով։

Ակադեմիկոս Ա. Բ. Կարինյանը նշելով դ. Օսսոնի, Թիրասյանի, Արմ. Սաղըղյանի, Թերզիբաշյանի, Կուրտիկյանի և ուրիշների տյուրույն գիտական աշխատությունները, ցանկություն հայտնեց, որպեսզի արևելագիտության սեկտորը անհրաժեշտ ուշադրություն նվիրի նաև Օմար Խայամի, Ֆիզուլիի, Սաադիի, Ֆիրդուսու և Կարնամակի հայ թարգմանիչների նշանակալից աշխատանքների բնութագրմանը։

Ելույթի վերջում ընկ. Կարինյանը հիշեցրեց, որ ցանկալի կլինի բացահայտել և ցուցահանել, թե ինչպիսի մեծ ու կարևոր դեր են կատարել հայ ժողովրդի աշխատավոր խավերի և առաջավոր գործիչների բարձր արվեստն ու մշակույթը, կուլտուրական շինարարությունը, հետամնաց և մարդատյաց ուժերի դեմ մղվող պայքարի տարիներին։

Լեզվի ինստիտուտի դիրեկտոր Գ. Ջահուկյանը խոսեց այն խնդիրների մասին, որ ինստիտուտը ծրագրել է կատարել առաջիկայում։ Նա նշեց, որ լեզվաբանները աշխատում են հայոց լեզվի բացատրական բառարանի հրատարակման, հայոց լեզվի գիտական քերականության երեք հատորյակի ստեղծման, հայ բարբառների ատլասի կազմման, գրաբարի, միջին հայերենի և նոր հայերենի պատմության ստեղծման վրա։

Այնուհետև ընկ. Ջահուկյանը ակադեմիայի ղեկավարության ուշադրությունը հրավիրեց հրատարակչական գործի լավագույն կազմակերպման վրա։ Նա նշեց, որ հրատարակչության աշխատանքի անբավարար դրվածքը, պոլիգրաֆիական բազայի ներկա վիճակը, խոչընդոտում են գիտական կարևոր նշանակություն ունեցող շատ աշխատությունների ժամանակին հրատարակմանը։

Տնտեսագիտական ինստիտուտի կատարած գիտահետազոտական աշխատանքները, ասաց ակադ. Աշ. Հովհաննիսյանը, ցույց են տալիս, որ ինստիտուտը ընդհուպ չի զբաղվում ռեսպուբլիկայի սոցիալիստական շինարարության արդիական հարցերով։ Չդալի թերություն պետք է համարել այն, որ ինստիտուտը շրջանցում է Հայաստանի ժողովրդական տնտեսության և հայ տնտեսագիտական մտքի պատմությանը։ Պատմության ինստիտուտից ցարդ անկատար մնացած խնդիրը հայ պատմագրության պատմության հարցն է։ Այդ բնագավառում ամենագլխավոր

դժվարության առաջացման պատճառներից մեկն այն է, որ ինչպես պետական համալսարանը, այնպես և գրականության ինստիտուտը շուրջ երկու տասնամյակի ընթացքում արժանի խորությամբ չեն մշակում հայ հին գրականության և հատկապես գրական պրոզայի ուսումնասիրության կարոտ հարցերը և չեն տալիս համապատասխան տրակյալ կադրեր։ Մյուս կողմից մեծ թերություն պետք է համարել այն, որ մեր պարբերականներում անբավարար է զարգանում պատմագրական բնագավառում լույս տեսնող գրքերը։ Ընկ. Հովհաննիսյանը մատնանշեց նաև այն, որ անհրաժեշտ է պարզել գրականության ինստիտուտի մամուլի սեկտորի պրոֆիլը, հաշվի առնելով հայ մամուլի մատակարարած հարուստ նյութերի կարևորությունը և այն, որ այդտեղ են կենտրոնացած XIX և XX դարերի հայ հասարակական և բենադատական մտքի պատմության կարևոր աղբյուրները։

Մաշտոցի անվան մատենադարանի դիրեկտոր, ակադեմիայի թղթակից-անդամ, դոկտոր Լ. Խաչիկյանի ելույթը նվիրված էր գիտահետազոտական ինստիտուտների աշխատանքները կոորդինացնելու, հայ դաղութների մշակութային արխիվներն ուսումնասիրելու, ակադեմիայի սիստեմի բոլոր ինստիտուտներում գտնվող միկրոֆիլմերը համատեղ օգտագործելու հարցերին։

Ժողովի մասնակիցները հետաքրքրությամբ լսեցին փիլիսոփայության և իրավունքի սեկտորի վարիչ, ՀՍՍՌ գիտության վաստակավոր գործիչ Հ. Գ. Ասլանյանի՝ «Բուրժուական պատմափիլիսոփայության սնանկացումը» և պատմական գիտությունների դոկտոր Բ. Ն. Առաքելյանի «Արմավիրի պեղումների նշանակությունը հայ մշակույթի ուսումնասիրության համար» թեմաներով զեկուցումները։

## ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆՆԵՐ

Տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի գիտական նստաշրջան՝ նվիրված ռուսական տպագրության 400-ամյակին։

Գիտական նստաշրջանում բացման խոսքով հանդես եկավ ՀՍՍՌ ԳԱ պրեզիդենտ՝ ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը։

— Տպագրության արվեստը,— նշեց ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը,— միշտ բարձր են գնահատել բոլոր ժողովուրդները։ Ահա թե ինչու ամենևին էլ զարմանալի չէ, որ այսօր նշելով ռուսական տպագրության 400-ամյակը, առանձնակի հարգանքով ենք վերաբերվում առաջին ռուսական տպագրիչների պատմական կարևոր դերի ու վաստակի բեռնադրմանը, մեծ ուշադրությամբ ուսումնասիրում անցյալի տպագրիչների տեխնիկան և բազմազան հրատարակությունների փորձը, գնահատում ժողովրդի կուլտուրական վերելքի համար նրանց ձեռնարկած քայլերն ու աշխատանքը։

Անհրաժեշտ է նշել 19-րդ դարում և մեր օրերին տպագրված նոր գրքերի բարձր տեխնիկան, բազմազան գրքերի հատկանիշները ու գիտական ուղղությունը, ժողովրդի հետ սերտորեն կապված առաջավոր գրողների ու գիտնականների դերը, ինչպես նաև նորանոր ընթերցողների սավառնածավալ շարքերի աճը։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունից հետո անսահման չափով ավելացել է գրողների, ընթերցողների թիվը, բարձրացել նրանց ակտիվությունը, փոխվել է տպագրություն ու հրատարակությունների ուղղությունը։ Գիրն ու գրականությունը կարևոր դեր են կատարում ժողովուրդների եղբայրության, կոմունիստական լուսավոր հասարակության կառուցման, խաղաղության ամրապնդման գործում։

Այնուհետև կարդացվեցին զեկուցումներ։ «Ռուսական տպագրության 400-ամյակը» թեմայով զեկուցեց ՀՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Ա. Բ. Կարինյանը*։ «Ռուսաստանի առաջին հայկական տպարանները» թեմային էր նվիրված բանասիրական գիտությունների թեկնածու Ա. Ս. Բաբայանի զեկուցումը։

Գիտական նստաշրջանի մասնակիցները մեծ հետաքրքրությամբ դիտեցին ռուսական տպագրությանը նվիրված գրքի ցուցահանդեսը, որտեղ ներկայացված էին ռուսական գրքի լավագույն նմուշները։

---

* Ակադեմիկոս Ա. Բ. Կարինյանի զեկուցումը տե՛ս «Տեղեկագրի» այս համարում։